

**«ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Հաստատում եմ

ՎՊՄԻ ռեկտոր, ք.գ.դ. պրոֆեսոր

\_\_\_\_\_ Գ.Խաչատրյան

“29 ” \_04\_ 2011թ.

*Կարգ*

***«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ» ՊՈԱԿ-ում որակավորման քննությունների  
անցկացման***

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գլխխորհրդում

(արձանագրություն թիվ 4 “\_29\_\_\_” \_\_\_04\_\_\_ 2011թ.)

## **1. Ընդհանուր դրույթներ**

Սույնով սահմանվում է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) որակավորման քննությունների և դասընթացների կազմակերպման ու անցկացման կարգը:

Սույն կարգի իրավական հիմքն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ Կրթության մասին օրենքը, ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը, ԲՈՀ-ի կանոնադրությունը, ինստիտուտի կանոնադրությունը:

### **2. Որակավորման դասընթացների և քննությունների կազմակերպման ու անցկացման նպատակը և խնդիրները**

2.1. Որակավորման քննությունները գիտական աստիճանաշնորհման անբաժանելի մասն են, որոնց նպատակը ՀԱՅՑՈՐԴԻ՝ որպես ապագա գիտնականի մասնագիտական պատրաստվածության ստուգումն է:

2.2. Սահմանվում են որակավորման քննություններ փիլիսոփայությունից, օտար լեզվից, ինչպես նաև ստուգարք՝ ինֆորմատիկայից:

2.3. Որակավորման քննությունների կամ ստուգարքի դասընթացներին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն (դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս):

2.4. Քննությունները և ստուգարքը հանձնվում են ԲՈՀ-ի հաստատած ծրագրերով:

2.5. Դասընթացներին, քննություններին ու ստուգարքին մասնակցելու համար սահմանվում են առանձին վարձավճարներ:

2.6. Որակավորման քննությունները և ստուգարքը կազմակերպվում են տարեկան 2 քննաշրջաններով (մայիս – հունիս և հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին):

2.7. Դասընթացներն անցկացվում են տարին երկու անգամ՝ մարտ – մայիս և սեպտեմբեր – նոյեմբեր ամիսներին: Դրանք նախորդում են որակավորման քննություններին:

Յուրաքանչյուր առարկայի համար սահմանվում է առնվազն 40 ժամ:

Դասընթացների համար նախատեսված ժամաքանակը կարող է փոխվել ծրագրերի փոփոխությանը համապատասխան:

### **3. Քննությունների և ստուգարքի անցկացման ընթացակարգը**

3.1. Դասընթացներն անցկացվում են հետևյալ կարգով.

- Փիլիսոփայություն - խումբը՝ 5-7 հոգի,
- Օտար լեզու – խումբը՝ 5-7 հոգի,
- Ինֆորմատիկա - խումբը՝ 5-7 հոգի:

3.2. Դասընթացների համար սահմանվում են հետևյալ վարձավճարները.

փիլիսոփայություն՝ 75.000 դրամ, մեկ անձի համար՝ 15.000 դրամ.

ինֆորմատիկա՝ 100.000 դրամ, մեկ անձի համար՝ 20.000 դրամ.

օտար լեզու՝ 125.000 դրամ, մեկ անձի համար՝ 25.000 դրամ:

3.3. Եթե դասընթացների մասնակիցների թիվը 5-ից քիչ է, դասընթացի համար նախատեսված վարձավճարի չափը բաժանվում է մասնակիցների քանակի վրա՝ դրանով որոշելով մեկ անձի համար սահմանվող գումարը: Բայց հայցորդի տվյալ առարկայի վճարը չի կարող գերազանցել 3.2.-րդ կետում մեկ անձի համար նախատեսված վճարի չափի կրկնապատիկը: (Օրինակ՝ եթե օտար լեզվի դասընթացին մասնակցելու ցանկություն է հայտնել երկու հոգի, մեկ հոգու վճարը կկազմի 50.000 դրամ, այլ ոչ թե 62.500):

3.4. Դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում՝ ինստիտուտի ռեկտորի անունով,

բ) բարձրագույն կրթության փաստաթղթի պատճենը

(օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

3.5. Ինստիտուտը ԲՈՅ է ներկայացնում քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:

Հանձնաժողովները հաստատվում են հետևյալ կազմով՝

նախագահ (գիտության դոկտոր կամ թեկնածու) և 2-4 անդամներ:

3.6. Դասընթացների ընթացքում հաշվառման մատյաններում դասախոսի կողմից գրանցվում են նաև դասի թեմաները:

3.7. Որակավորման քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում՝ ինստիտուտի ռեկտորի անունով,

բ) բարձրագույն կրթության փաստաթղթի պատճենը,

(օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

- 3.8. Ոչ մասնագիտական որակավորման քննությունների և ստուգարքի վարձավճարը սահմանվում է 30.000 դրամ, իսկ մասնագիտությունից որակավորման քննության համար՝ 60.000 դրամ:
- 3.9. Որակավորման քննությունների և ստուգարքի օրերի համար կազմվում է ժամանակացույց, որը հաստատում է ինստիտուտի ռեկտորը:
- 3.10. Հարցատոմսերը կազմվում են քննության օրը՝ քննությունից առաջ, հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցությամբ (հանձնաժողովի նախագահի պարտադիր մասնակցությամբ) քննության մասնակիցների մեկով ավելի քանակով (եթե, օրինակ, քննությանը մասնակցում է երեք մարդ, կազմվում է 4 տոմս):
- 3.11. Քննության և ստուգարքի ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը և քննության վերջնական արդյունքը:
- 3.12. Որակավորման քննությունները գնահատվում են 4 բալային համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»:
- Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը և անդամները: Արձանագրությունները պահպանվում են ինստիտուտում՝ ասպիրանտուրայի բաժնում:
- 3.13. Քննությանը և ստուգարքին մասնակցած անձինք արդյունքների մասին տեղականում են նույն օրը:
- 3.14. Որակավորման քննության և ստուգարքի հանձնման մասին ինստիտուտը տալիս է տեղեկանք:
- 3.15. Քննությունների վերահանձնում տվյալ քննաշրջանում չի թույլատրվում: Որակավորման քննությունները և ստուգարքը չհանձնած հայցորդները կարող են դրանք հանձնել հաջորդ քննաշրջաններում:
- 3.16. Որակավորման դասընթացները, քննություններն ու ստուգարքը վերահսկում է ասպիրանտուրայի բաժինը: